

բացակայութեան Ամեմ. Ս. Պատրիարք Հօր, ընդունուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս.էմ:

Բշ. 25 Մարտ.- Երեկոյեան, Նէյ- շընալ Պանդոկի մէջ, Յունաստանի անկախութեան 170 ամեակին առթիւ, Հելլէն Հիւպատոս Պր. Միշէլ Բամպանիսի կողմէ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս., Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. եւ Տիար Գ. Հիմոյլեան:

Դշ. 27 Մարտ.- Երեկոյեան, Ս. քաղաք ժամանեց համայն Ռուսիոյ Պատ- րիարք Ալէքսի Բ.: Դիմաւորութիւնը կատարուեցաւ Եաֆայի դրան մօտ:

- Մեր կողմէ դիմաւորութեան եկած էին Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս. եւ Հոգշ. Տ. Գուսան Վրդ., որոնք յետոյ միացան Ս. Յարութիւն ընթացող թափօրին: Ծամբու ընթացքին, ամոնց ընկերացաւ Յունաց Ամեմ. Տ. Տիոտորոս Պատրիարքը: Ս. Գերեզմանի ուխտէն ետք, հիւր Պատրիարքը իր շքախումբով առաջ- մորդուեցաւ Տանարի կեդրոնական մասը գրաւող եւ Բաթօլիկոմ անունով ծանօթ Յունաց Եկեղեցին, ուր կը գտնուէին

ճան Ամեմ. Տ. Թորգոմ եւ Լատիմաց Ամեմ. Տ. Միշէլ Սապպահ Պատրիարքները, տարբեր յարամուածութեանց պետական եւ զինուորական ներկայացուցիչներ, հիւ- պատոսներ եւ բազմաթիւ ժողովուրդ: Փոխանակուած ճառերէ եւ բարի գալստեան արտայայտութիւններէ ետք Ռուս պատուիրակութեան անդամները եղանակե- ցին շարակամներ: ապա բոլորն ալ ողջունագրուեցան բարձրապատիւ Հիւ- րին հետ եւ մեկնեցան:

Ռւր. 29 Մարտ.- Կէսօրին, Ամեմ. Ս. Պատրիարք Հայրը, հետն ունեւալով Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ եւ Սեւան Սրբազաններ եւ գաւազանակիր Հոգշ. Տ. Համբարձու Վրդ. Քէշիշեան, ներկայ եղաւ Ռուսաց Մայր Տանարին մէջ ի պատիւ Ալէքսէյ Բ. Պատրիարքին մուիրուած ճաշկերոյթին:

Կիր. 31 Մարտ.- Կէսօրէ ետք, Ինթըրքոմքիմէնթըլ Պանդոկի մէջ, Յու- մաց Պատրիարքի կողմէ, ի պատիւ Ռուսաց հիւր Պատրիարքին տրուած ընդունելու- թեան ներկայ եղան Ամեմ. Սրբազան Պատրիարք Հայրը եւ Գերշ. Լուսարարա- պետ Սրբազանը:

ԱՄԱՆՈՐԻ ՀԱՆԴԵՍ ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ

Ուրիշ տարիներու նման, այս տարի եւս, 13 Յունուար, Կիրակի, Ամամորի մախօր- եակին, Ժառանգաւորաց Վարժարանի ճաշարահիմ մէջ կայացաւ Ամամորի Համդէսը, շքե- ղագարդ տօնածառին շուրջ, մախագահութեամբ Ամեմ. Ս. Պատրիարք Հօր եւ ի ներկայու- թեան Միաբանութեան անդամներուն եւ Վանական Հաստատութեանց պաշտօնէութեան:

« Սիրտ ի Սիրտ »՝ վարժարանի քայլերգով բացուած համդէսի ընթացքին գործադ- րուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը: Բացման խօսքը ըրաւ Տեսուչ Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Ասողեան: Ժառանգաւոր սաներ խմբերգեցին ու արտասանեցին: Ամեմէն հետաքրքրականը, որ մորոյթն էր այս տարուան համդէսին, թատրերգութիւնն էր, « Մուտքի Բնմուտիւն », զոր յաջողութեամբ բեմադրեցին մեր Սարկաւազներն ու Ուրա- րակիրները եւ արժանացան ներկաներու խանդավառ ծափերուն:

Կաղանդ Պապայի սրահ մուտք գործելէն ետք, ներկաները ստացան իրենց մուէրները: Երուպական երաժշտութեան ուսուցիչ Տիար Վահէ Գալայճեան մուագեց Ծմնդեան հեշտաւուր մեղեդիներ:

Նորին Ամեմապատուութիւնը իր փակման խօսքին մէջ խօսեցաւ ժամանակի յղացքին ու ըմբռնումին՝ այլեւ գայն իմաստուն կերպով գործածելու մասին, ու պատշաճ յորդորական խօսքերէ վերջ, աշակերտութեան ուղղեալ, տուաւ իր օրհնութիւնը բոլորին: Տէրունական աղօթքի երգեցողութեամբ համդէսը հասաւ իր աւարտին: